ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
<<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 29 հոկտեմբերի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Ս. Միրոյանը, Վ. Սարգսյանը և Ա. Մակարյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

<< ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն>> ծածկագրով մրցույթի մասնակից ընկերությունների բանակցություններին մասնակցող ներկայացուցիչներ՝

<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ –Արշավիր Մարտիկյան, Գագիկ Ղազարյան
<<Մոդուլ>> ՍՊԸ – Վահան Վարդանյան

1. <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ. Ջրային կոմիտեի կարիքների համար՝ **ՀՀ Վայոց Ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության տրամադրման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների շուրջ բանակցություններ:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Վ. Օհանջանյանը և հրապարակեց յուրաքանչյուր մասնակցի տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը՝ մյուս մասնակիցների համար:

2. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաջորդաբար զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Գինն առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/	ԱԱՀ /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/
Չափաբաժին 1 նախահաշվային գին 43 400 000				
1	<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ	27 495.000	5 499.000	32 994.000
2	<<Մոդուլ>> ՍՊԸ	79 000.000	15 800.000	94 800.000
3	<<ՀԳՇՆ>> ՍՊԸ	308 333.333	61 666.667	370 000.000

Բանակցությունների ընթացքում մասնակից ընկերությունների ներկայացուցիչների կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

3. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն>> ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի առաջին տեղ զբաղեցրած մասնակից համարել <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ին.
   <<Մոդուլ>> և <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ների հայտերը մերժել (մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների համար գնման հայտով սահմանված գինը):

2. Հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն>> ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

3. 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ին, առաջարկել՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով (Հավելվածներ 3, 3.1 և 3.2) նախատեսված փաստաթղթերը:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ---------- Վ. Օհանջանյան

Անդամներ ---------- Ա. Սիմոնյան

---------- Ս. Միրոյան

---------- Վ. Սարգսյան

---------- Ա. Մակարյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան